# ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 5 - 6 (16706) ՇԱԲԱԹ 19 ՀՈՒՆՎԱՐԻ 2019 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵՏՐԻ


ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

## ՄԱՄՈՒԿԱ ԲԱԽՏԱՁԵՆ ԲՈԼՆԻՍԻՈՒՄ ԱՆՁԱՄԲ ՇՆՈՐՀԱՎՈՐԵՑ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ ՎԱՐՉԱՊԵՏ ՆՇԱՆԱԿՎԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

*Հունվարի 15-ին Բոլնիսիում կայացավ Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեի եւ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի ոչ ֆորմալ հանդիպումը:*



Հանդիպմանը Վրաստանի կառավարության ղեկավարը եւս մեկ անգամ շնորհավորեց Նիկոլ Փաշինյանին Հայաստանի վարչապետ վերանշանակվելու կապակցությամբ եւ համոզմունք հայտնեց, որ երկկողմ հետագա ակտիվ փոխգործակցությունը կնպաստի երկու հարեւան ու բարեկամ պետությունների միջեւ տարբեր ոլորտներում համագործակցության զարգացմանն ու ընդլայնմանը:

Իր հերթին, Նիկոլ Փաշինյանը Մամուկա Բախտաձեին շնորհակալություն հայտնեց շնորհավորանքի համար եւ ընդգծեց հայ-վրացական հարաբերությունների կարեւորությունը բոլոր ոլորտներում:

Ոչ ֆորմալ հանդիպմանը զրուցակիցները մտքեր փոխանակեցին երկկողմ հարաբերությունների օրակարգային մի շարք հարցերի շուրջ:

Մամուկա Բախտաձեն եւ Նիկոլ Փաշինյանը այցելեցին Բոլնիսիի մոտակայքում գտնվող Սուրբ Սիոնի վրաց ուղղափառ եկեղեցի: Ապա Բոլնիս-Խաչեն հայաբնակ գյուղում հանդիպեցին տեղի բնակիչների հետ:

(Թեմայի շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

## ԿԱՅԱՑԱՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՎ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Հունվարի 15-ին Թբիլիսիի Աթոնելի փողոցում գտնվող նախագահական նստավայրում տեղի ունեցավ Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլու եւ վարչապետ Մամուկա Բախտաձեի առաջին աշխատանքային հանդիպումը:

Հանդիպմանը նախագահն ու վարչապետը քննարկեցին ապագա համագործակցության եւ հաղորդակցության հետ կապված հարցեր: Հանդիպմանը նախագահն ու կառավարության ղեկավարը անդրադարձան նաեւ ընթացիկ հրատապ հարցերին ու միջազգային առաջիկա այցերին:



ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

## ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ ԾՐԱԳՐԵՐԸ

*Հունվարի 15-ին Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին հանդիպում ունեցավ ԵՄ դիտորդական առաքելության ղեկավար Էրիկ Հոգեի հետ:*

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց դիտորդական առաքելության գործունեությանը եւ հետագա ծրագրերին:

Զրույցի ընթացքում ընդգծվեց, որ նման հանդիպումները պետք է պարբերական լինեն:

Հանդիպմանը ներկա էին նախագահի աշխատակազմի ղեկավար Լաշա Ժվանիան, աշխատակազմի ղեկավարի տեղակալ Քեթեւան Մախարաշվիլին, ԵՄ դիտորդական առաքելության տեղեկատվական վերլուծական հաշվետվությունների վարչության պետ Անդրեա Խմիելինսկը եւ ուրիշներ:

ՎՐԱՍՏԱՆ - ՖՐԱՆՍԻԱ

## ԻՐԱԿԼԻ ԿՈԲԱԽԻՁԵԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ՖՐԱՆՍԻԱ

*Հունվարի 14-16-ը Վրաստանի խորհրդարանական պատվիրակությունը՝ օրենսդիր մարմնի նախագահ Իրակլի Կոբախիձեի գլխավորությամբ, պաշտոնական այցով գտնվում էր Ֆրանսիայում:*

Այցի շրջանակներում, Իրակլի Կոբախիձեն հանդիպումներ ունեցավ Ֆրանսիայի Սենատի նախագահ Ժերար Լարշեսի, ազգային ասամբլեայի նախագահ Ռիչարդ Ֆերանսի հետ: Վրաստանի խորհրդարանի նախագահը խոսքով ելույթ ունեցավ նաեւ Ֆրանսիայի ազգային ասամբլեայի արտաքին գործերի կոմիտեում, պատասխանեց պատգամավորներին հետաքրքրող հարցերին:

Վրաստանի խորհրդարանական պատվիրակությունը՝ Իրակլի Կոբախիձեի գլխավորությամբ, այցելեց Փարիզի Լեւելի վրացական գերեզմանատուն, հանդիպում ունեցավ տեղի վրաց համայնքի ներկայացուցիչների հետ:

Հանրագումարելով Ֆրանսիա կատարած պաշտոնական այցի արդյունքները՝ Վրաստանի խորհրդարանի նախագահ Իրակլի Կո-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆ

## ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ՎԵՐԱՆՇԱՆԱԿՎԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏ

*Հունվարի 14-ին Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը ստորագրեց Նիկոլ Փաշինյանին վարչապետ նշանակելու հրամանագիրը:*



Վարչապետի պաշտոնում Նիկոլ Փաշինյանի թեկնածությունը նախագահին ներկայացրել է «Իմ քայլը» քաղաքական միավորումը, որը 2018 թվականի դեկտեմբերին հաղթել է ընտրություններում եւ Ազգային ժողովում ձեռք է բերել սահմանադրական մեծամասնություն: Հայաստանի օրենսդիր մարմնում 132 պատգամավորական մանդատներից «Իմ քայլը» իշխող դաշինքն ստացել է 88 մանդատ, «Բարգավաճ Հայաստան»-ը՝ 26, իսկ «Լուսավոր Հայաստան»-ը՝ 18:

Հայաստանի սահմանադրության մեջ 2018 թվականին կատարված փոփոխությունների համաձայն, նորընտիր խորհրդարանը վարչապետին չի ընտրում: Խորհրդարանական մեծամասնություն ստացած քաղաքական ուժը առաջադրում է կառավարության ղեկավարի պաշտոնի իր թեկնածուին, որից հետո այն հաստատում է երկրի նախագահը:

## ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

*Հունվարի 14-ին Հայաստանի 7-րդ գումարման Ազգային ժողովի առաջին նիստում Ազգային ժողովի (ԱԺ) նախագահ ընտրվեց Արարատ Միրզոյանը:*



Փակ եւ գաղտնի քվեարկությամբ ԱԺ 132 պատգամավորներից 131-ը քվեարկեց Արարատ Միրզոյանի թեկնածության օգտին:

40-ամյա Արարատ Միրզոյանն ավարտել է Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի արվեստի բաժինը, համալսարանի պատմության ֆակուլտետի մագիստրատուրան՝ որպես պատմաբան, Հայաստանի պետական կառավարման ակադեմիան՝ որպես պետական ծառայող, պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մասնագետ: Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիան ասպիրանտուրան՝ որպես պատմական գիտությունների թեկնածու:

2017 թվականի ապրիլի 2-ին «Ելք» կուսակցությունների դաշինքից ընտրվել է Հայաստանի 6-րդ գումարման Ազգային ժողովի պատգամավոր:

2018 թվականի մայիսի 11-ին նշանակվել է Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետ:

2018 թվականի դեկտեմբերի 9-ին կայացած արտահերթ խորհրդարանական ընտրություններում ընտրվել է ԱԺ պատգամավոր:

## ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԸ, ԼԵՆԱ ՆԱԶԱՐՅԱՆԸ ԵՎ ՎԱՀԵ ԷՆՖԻԱՋՅԱՆԸ՝ ԱԺ ՓՈԽՆԱԽԱԳԱՀՆԵՐ



Հունվարի 14-ին Հայաստանի 7-րդ գումարման Ազգային ժողովը (ԱԺ) իր անդրանիկ նիստում ԱԺ նախագահի տեղակալներ ընտրեց «Իմ քայլը» խմբակցությունից ԱԺ փոխնախագահի պաշտոնում առաջադրված 39-ամյա Ալեն Սիմոնյանին, 36-ամյա Լենա Նազարյանին եւ ընդդիմադիր խմբակցությունից ԱԺ փոխնախագահ ընտրեց «Բարգավաճ Հայաստան» խմբակցության կողմից առաջադրված թեկնածու, 41-ամյա Վահե Էնֆիաջյանին:

ՎՐԱՍՏԱՆ - ՖՐԱՆՍԻԱ

# ԻՐԱԿԼԻ ԿՈԲԱԽԻՁԵԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ՖՐԱՆՍԻԱ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

բախիձեն հայտարարեց, որ հանդիպումներում առանձնակի ուշադրություն հատկացվեց երկրի քաղաքական առաջնահերթություններին, այն է՝ Եվրամիության եւ ՆԱՏՕ-ի կառույցներին Վրաստանի ինտեգրմանը:

- Մենք մեր ֆրանսիական գործընկերներին պարզաբանեցինք, որ դա մեր քաղաքակիրթ եւ արժեքային ընտրությունն է: Այդ պատճառով էլ այդ ուղղությամբ մեր քաղաքականությունը հետեւողական է: Մենք նաեւ ուշադրություն բեւեռեցինք այն հարցի վրա, թե որքանով է Վրաստանի համար նշանակալի Ֆրանսիայի աջակցությունը, ինչպես եվրաինտեգրմանը, այնպես էլ՝ երկկողմ համագործակցության ուղղությամբ, ինչը կնպաստի ինտեգրման գործընթացի զարգացմանը,- հայտարարեց Իրակլի Կոբախիձեն:



ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

# ՕՐԵՆՍԴԻՐ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՄԱՐՄԻՆՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿՎԵՐՍԿՍԻ ՓԵՏՐՎԱՐԻ 5-ԻՆ

***Վրաստանի խորհրդարանը, կանոնակարգի համաձայն, փետրվարի 5-ին՝ ամսվա առաջին երեքշաբթի օրը, կսկսի գարնանային նստաշրջանը:***

Օրենսդիր մարմինը գարնանային նստաշրջանի ընթացքում մի քանի կարեւոր որոշումներ պետք է ընդունի: Այդ թվում, օրենսդիրները կլսեն Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլու առաջին ամենամյա հաշվետվությունը, կքննարկեն Գերագույն դատարանի դատավորների թեկնածուների հարցը, կընտրեն նաեւ Գերագույն դատարանի նախագահին, որի պաշտոնը թափուր է դեռեւս նախորդ տարվա օգոստոսից:

Խորհրդարանի նոր կանոնակարգը ուժի մեջ է մտել նախագահի երդմնակալության արարողությունից հետո, եւ օրենսդիրները գարնանային նստաշրջանին կգործեն նոր կանոնակարգի պայմաններով:

Կանոնակարգի համաձայն, գարնանային նստաշրջանը կավարտվի հունիսի վերջին ուրբաթ օրը:

Նշենք, որ ընդունված որոշման համաձայն, երկրի օրենսդիր գերագույն մարմինը իր աշխատանքը իրականացնելու է Թբիլիսիում:



# ԴԱՎԻԹ ՃԻՃԻՆԱՁԵՆ ՀԵՌԱՆՈՒՄ Է «ՀԱՅՐԵՆԱՍԵՐՆԵՐԻ ԱԼՅԱՆՍԻՑ»

***Խաշուրի շրջանից Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր Դավիթ Ճիճինաձեն հեռանում է «Հայրենասերների դաշինքի» խորհրդարանական խմբակցությունից: Պատգամավորի պարզաբանմամբ, նշված հարցի վերաբերյալ դիմումը կներկայացնի գարնանային նստաշրջանի մեկնարկին:***

Ճիճինաձեի խոսքով, «Հայրենասերների դաշինք» խմբակցությունում անդամագրվելու պատճառը «Սաակաշվիլի-Բոկերիա ռեժիմը հանցավոր ռեժիմ ճանաչելու մասին օրենսդրական նախաձեռնությունն էր»: Այս պահի դրությամբ, նշված հարցը քննարկված է, ինչպես ինքն է հայտարարել խմբակցությունում առաջադրանքն ավարտել է:

Հիշեցնենք, որ Դավիթ Ճիճինաձեն «Հայրենասերների դաշինքին» էր միացել անցյալ տարի հոկտեմբերին: Միանալու պատճառը խմբակցության լուծարման կանխումն էր: Ավելացնենք, որ Դավիթ Ճիճինաձեն անցյալ տարի ամռանը հեռացվել էր «Վրացական երազանք» կուսակցության շարքերից:

Դավիթ Ճիճինաձեն գարնանային նստաշրջանից աշխատանքը անկախ պատգամավորի կարգավիճակով է նախատեսում շարունակել:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

# ՎԱՐՉԱՊԵՏԵՐԻ ԳԱԼԸ ԲՈԼՆԻՍ-ԽԱՉԵՆ՝ ՆՈՐ ՀԱՐԹԱԿ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

***Հունվարի 16-ին Բոլնիսիում տեղի ունեցած Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեի եւ Հայաստանի նորանշանակ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ոչ ֆորմալ հանդիպումից հետո, վարչապետերը ուղեւորվեցին Բոլնիսիից 10 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Վրաստանի Ուղղափառ եկեղեցիներից ամենահին, 478-493 թվականներին կառուցված, Սուրբ Սիոնի բազիլիկ եկեղեցի: Եկեղեցու հոգեւոր հովիվ, մաման (հայր) Բեսարիոնը ջերմորեն ողջունեց հյուրերին:***

«Վրաստան» թերթի հետ զրույցում հայր Բեսարիոնը նշեց, որ իր համար մեծագույն անակնկալ էր երկու վարչապետերի այցը:

Նիկոլ Փաշինյանի հետ զրույցում հայր Բեսարիոնն ասաց, որ եկեղեցի հաճախ են այցելում նաեւ հարեւանությամբ գտնվող հայաբնակ Բոլնիս-Խաչեն գյուղի բնակիչները: «Դա հետաքրքրեց թե' Հայաստանի եւ թե' Վրաստանի վարչապետերին, եւ նրանք որոշեցին լինել նաեւ հարեւանությամբ գտնվող այդ գեղեցիկ գյուղում»:

Երկու երկրների վարչապետերը, եկեղեցում մոմեր վառելուց հետո, ուղեւորվեցին, Բոլնիս-Խաչենի ուղղությամբ, թեպետ, չհասած գյուղի կենտրոն հանդիպեցին առաջին իսկ բոլնիսխաչենցիներին, որոնք, ինչպես պարզվեց, տեղի դպրոցի տնտեսվար Սլավիկ Թեյմուրազյանը եւ հաշվապահ Վարդան Մանուչարյանն էին, ու նաեւ գործարարներ Շուրա Անանյանն ու Վալերիկ Վանյանը:



Մաման Բեսարիոնը՝ Նիկոլ Փաշինյանի հետ Սուրբ Սիոնի եկեղեցում



Հայաստանի եւ Վրաստանի վարչապետեր Նիկոլ Փաշինյանը եւ Մամուկա Բախտաձեն զրուցում են բոլնիսխաչենցիների հետ

Ըստ բոլնիսխաչենցիների, այդ կարճատեւ հանդիպումն իսկապես մեծ անակնկալ էր: Նրանք մեզ հետ զրույցում ընդգծեցին, որ այսօրվա վարչապետերի հանդիպումը խոսում է հայ-վրացական մատենագրության մեջ նոր հարաբերությունների ջերմ ու բարեկամական մակարդակի մասին: Նրանց խոսքով, Սիոնի եկեղեցի շատ են գալիս զբոսաշրջիկներ, այդ թվում՝ նաեւ պաշտոնական պատվիրակություններ, բայց գյուղն առաջին անգամ ականատես եղավ նման այցի:

Բոլոր դեպքերում, հայաբնակ Բոլնիս-Խաչեն գյուղի բնակիչներն այսօր հպարտանում են՝ «երկու պետությունների մեր վարչապետերը եկան նաեւ մեր Բոլնիս-Խաչեն գյուղ»:



ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ

## ՄԵՐԺՎԵՑԻՆ BREXIT-Ի ԳՈՐԾԱՐՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

*Բրիտանացի պատգամավորները մերժեցին Brexit-ի պայմանների շուրջ Եվրամիության հետ գործարքը: Հունվարի 15-ին կայացած վճռական քվեարկության ընթացքում 432 պատգամավոր դեմ է արտահայտվել գործարքին, որն անցյալ տարվա նոյեմբերին հավանության էր արժանացել Լոնդոնի եւ Բրյուսելի կողմից 1,5 տարվա բանակցություններից հետո: Համաձայնագրի այդ նախագիծը, որի ընդունումը պնդում էր վարչապետ Թերեզա Մեյը, պաշտպանել է 202 պատգամավոր: Այսպիսով, գործարքը մերժվել է 230 ձայնի տարբերությամբ, ինչը դարձել է Մեծ Բրիտանիայի վարչապետի ամենախոշոր պարտությունը վերջին 95 տարվա ընթացքում:*

*Քվեարկության արդյունքների հայտարարումից անմիջապես հետո, ելույթ ունենալով Համայնքների պալատում, Մեյն ասել է, որ ստեղծված իրավիճակում ինքը կարեւոր է համարում կանխավ ապահովել խորհրդարանի պաշտպանությունը:*

*Հաջորդ օրը, խորհրդարանը ձայների մեծամասնությամբ իր պաշտպանությունը հայտնեց կառավարությանը:*

ԱՄՆ

## ՍԻՐԻԱՅԻՑ ԴՈՒՐՍ Է ԲԵՐՎՈՒՄ ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ

*Վաշինգտոնը ձեռնամուխ է եղել Սիրիայից ռազմական տեխնիկայի փոխադրմանը՝ այդ երկրից ամերիկյան զորքերի դուրսբերման պլաններին համապատասխան: Առաջին խմբաքանակը արդեն դուրս է բերվել Սիրիայից:*

*Զորքերի դուրսբերման գործողության իրականացման գործում ղեկավար դերը հատկացված է ԱՄՆ-ի զինուժերի Կենտրոնական հրամանատարությանը: Ավելի վաղ, այնտեղ արդեն որշվել է, թե ինչ նավեր, ինքնաթիռներ, ուղղաթիռներ եւ ցամաքային տեխնիկա է մասնակցելու այդ գործընթացին: Անհրաժեշտ միջոցների մեծ մասն արդեն գտնվում է տարածաշրջանում:*

ՈՒԿՐԱԻՆԱ

## ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՎՏՈԿԵՖԱԼԻԱՆ ՀԱՍՏԱՏՈՂ ՀՐԱՄԱՆԸ

*Հունվարի 5-ին Աշխարհի պատրիարք Բարդուղիմեոսը ստորագրել է Ուկրաինայի եկեղեցու ավտոկեֆալիան հաստատող հրամանը:*

*Տոնական արարողությունը կայացել է Ստամբուլում: Միջոցառմանը ուկրաինացի հոգեւորականների հետ միասին ներկա են գտնվել նաեւ Ուկրաինայի նախագահ Պետրո Պորոշենկոն եւ խորհրդարանի նախագահ Անդրեյ Պարուբը:*

*Ինչպես հայտնի է, դեկտեմբերի 4-ին աշխարհի պատրիարք Բարդուղիմեոսը ուղղափառ եկեղեցիներին կոչ է արել աջակցել Ուկրաինայի ավտոկեֆալիային:*

ՖՐԱՆՍԻԱ

## ՊԱՅԹՅՈՒՆ ՓԱՐԻԶՈՒՄ՝ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԶՈՀԵՐՈՎ

*Ֆրանսիայի մայրաքաղաքի կենտրոնական մասում հունվարի 12-ին տեղի ունեցած պայթյունի ժամանակ շենքի մի մասը փլուզվել է եւ այրվել: Վնասվել է մերձակայքի մի քանի ավտոմեքենա, կան տուժածներ՝ զոհվել է 4 մարդ, այդ թվում՝ երկու հրշեջ: 20-ը վիրավոր է, որոնցից 12-ի վիճակը ծանր է:*

*Տեղի ոստիկանության տեղեկությամբ, պայթյունը տեղի է ունեցել, հավանաբար, բնական գազի արտահոսքի պատճառով:*

ԷԿՈՆՈՄԻԿԱ

# ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ ԿԱԶՄԵԼ Է 4,7 ՏՈԿՈՍ

### ԱՎԵԼԱՑԵԼ Է ՆԱԵՎ ԿԵՆՍԱԿԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԸ

***Ինչպես տեղեկացրել է Վրաստանի վիճակագրական ազգային ծառայությունը, նախորդ տարվա 11 ամիսների տվյալներով, տնտեսական աճի ցուցանիշը կազմել է 4,7 տոկոս:***

Հանրագումարելով նախորդ տարվա արդյունքները՝ ծառայությունը նշում է, որ 2017 թվականի համեմատ, 27 տոկոսով նվազել են օտարերկրյա անմիջական ներդրումները: Արտաքին առեւտրի տեսանկյունից ավելացել են ինչպես արտահանման, այնպես էլ՝ ներկրման ցուցանիշները: Ծառայության տվյալներով, արտահանման ցուցանիշը ավելացել է 24 տոկոսով, ինչը համարվում է ռեկորդային:

Ինչ վերաբերում է երկրում գործազրկության մակարդակին, ապա վիճակագրության ազգային ծառայության տվյալներով, 2018 թվականին նախորդ տարվա համեմատ, այդ ցուցանիշը աննշան նվազել է: Նվազումը կազմել է ընդամենը մեկ տոկոս: Երկրում միջին աշխատավարձը ավելացել է 5 տոկոսով եւ կազմել 1225 լարի: Տարեկան արժեզրկման ցուցանիշը կազմել է 1,5 տոկոս:

Ինչ վերաբերում է կենսական նվազագույնին, ապա Վրաստանի վիճակագրության ազգային ծառայության տվյալներով, անցյալ տարվա դեկտեմբերին աշխատունակ տարիքի տղամարդու կենսական նվազագույնը կազմել է 175 լարի:

Ծառայության տվյալներով, կենսական ամենացածր նվազագույնի ցուցանիշը գրանցվել է անցյալ տարվա սեպտեմբերին եւ կազմել 170 լարի եւ 20 թեթրի: Այս տվյալների համեմատ, դեկտեմբեր ամսվա կենսական նվազագույնը ավելացել է 4 լարի եւ 8 թեթրիով: Սրա հետ մեկտեղ, նախորդ տարվա հոկտեմբերին, այս ցուցանիշը կազմել է 173,8, իսկ նոյեմբերին՝ 174,3 լարի:

Ինչ վերաբերում է միջին ընտանիքի կենսական նվազագույնին, ապա Վրաստանի Ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, դեկտեմբերին այս ցուցանիշը 293,6 լարի է: Մեկ անդամ ունեցող ընտանիքի դեպքում՝ 155,0 լարի, երկու մարդուց բաղկացած ընտանիքի դեպքում՝ 248,0, երեքի դեպքում՝ 279,0, չորսի դեպքում՝ 310,0, հինգի դեպքում՝ 348,8, վեց եւ ավելի անդամ ունեցող ընտանիքի պարագայում՝ 412,3 լարի:

***ՍԻՄՈՆ ԿԻԼԱՁԵ***



## ՀՈՒՆՎԱՐԻ 14-Ը ՎՐԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԴՐՈՇԻ ՕՐՆ Է



*Օրվա առիթով, Վրաստանի հերալդիկայի պետական խորհուրդը տարածել է հայտարարություն, որում, մասնավորապես ասված է. «Անկախության եւ միասնության համար պայքարի ճանապարհին Վրաստանի պետական դրոշը երեւում էր ազգային շարժման եւ բազմահազարանոց հանրահավաքների ժամանակ: Ազատ հասարակության հաստատման հետ մեկտեղ, երբ քաղաքական զարգացումը ստացավ խաղաղ բնույթ, ժամանակն է, որ դրոշը իր տեղը զբաղեցնի քաղաքացիների կյանքում:*

*Պետական դրոշի օրը ազգային տոն է: Վրաստանի պետական դրոշը յուրաքանչյուր քաղաքացու սեփականությունն է»,- ասված է Վրաստանի հերալդիկայի ազգային խորհրդի հայտարարության մեջ:*

## ՈՒԺԻ ՄԵՋ Է ՄՏԵԼ ՄԱՆՐԱԴՐԱՄԻ ԿԼՈՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

*Ընթացիկ տարվա հունվարի 11-ից Վրաստանում ուժի մեջ է մտել կանխիկ առքուվաճառքի ժամանակ մանրադրամի կլորացման կարգը: Հետայսու, մեկ կամ երկու թեթրիի մանրադրամի փոխարեն, այն կլորացվում է նվազեցման ուղղությամբ: Գումարները, որոնք ավարտվում են երեք կամ չորս թեթրիով՝ մինչեւ հինգ թեթրի: Հինգ թեթրիի ուղղությամբ կլորացվում են նաեւ վեց եւ յոթ թեթրիով ավարտվող գումարները: Ութ, ինը թեթրիի առկայության դեպքում, գումարը կլորացվում է մինչեւ 10 թեթրի: Միաժամանակ, նշվում է, որ շրջանառությունից հանվում են մեկ եւ երկու թեթրի արժողության մանրադրամները:*

## ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է ԱՅՑԵԳՐԵՐԻ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ

*Ինչպես արդեն հաղորդել ենք, 2017 թվականի մարտի 28-ից, Վրաստանի եւ Եվրամիության միջեւ սկսեց գործել այցեգրերի ազատականացման պայմանագիրը: Պայմանագրի գործողության օրվանից մինչեւ 2018 թվականի դեկտեմբերի 9-ը ներառյալ, անայցեգրային պայմանագրից օգտվել է Վրաստանի 339 255 քաղաքացի: Նրանք իրականացրել են 553 748 այց շենգենյան գոտու երկրներ:*

*Ինչպես տեղեկացրել է Վրաստանի ՆԳ նախարարությունը, վերոնշյալ ժամանակահատվածում Վրաստանի քաղաքացիները բոլորից շատ այցելել են Գերմանիա՝ 135 884 այց: Այդ տեսանկյունից, երկրորդ տեղում է Իտալիան՝ 80 520, երրորդը՝ Հունաստանը՝ 68 807 այց: Հաջորդ տեղերը զբաղեցնում են Լեհաստանը՝ 42 054, Իսպանիան՝ 40 914, Ֆրանսիան՝ 39 120, Հունգարիան՝ 24 120, Կիպրոսը՝ 18 258, Ավստրիան՝ 16 293 այց:*

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ՝ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ



***Եվրամիությունը ծրագրում է «Արեւելյան գործընկերության» անդամ երկրներում, այդ թվում ՝Վրաստանում, ենթակառույցային նախագծերի իրականացման համար հատկացնել 13 միլիարդ եվրո:***

Ինչպես տեղեկացրել է եվրահանձնաժողովի մամլո ծառայությունը, վերոնշյալ գումարով նախատեսված է իրականացնել 4800 մետր ավտոմոբիլային եւ երկաթուղային ճանապարհների, ինչպես նաեւ նավահանգիստների, օդանավակայանների, լոգիստիկ կենտրոնների եւ սահմանային անցումակետերի շինարարություն:

Ինչպես հայտարարեցին Բրյուսելում, «Արեւելյան գործընկերության» անդամ երկրներում՝ Վրաստանում, Հայաստանում, Մոլդովայում, Ուկրաինայում եւ Ադրբեջանում, ենթակառույցների զարգացումը կնպաստի դրանց տնտեսական վերելքին ու նոր աշխատատեղերի ստեղծմանը:

Տարածված հաղորդագրության մեջ նշվում է նաեւ, որ առանձին նախագծերի ավարտումը ծրագրված է 2020 թվականին, իսկ որոշ նախագծեր կավարտվեն 2030 թվականին:

Ենթակառույցային նախագծերն իրականացնում են եվրահանձնաժողովն ու Համաշխարհային բանկը:

Հիշեցնենք, որ 2017 թվականին, «Արեւելյան գործընկերության» գագաթաժողովում, այդ ծրագրին մասնակից վեց երկրները ներգրավվեցին պետական տրանսեվրոպական տրանսպորտային ցանցում: Դա մասշտաբային նախագիծ է, որի նպատակը Եվրամիության եւ նրա սահմանների շուրջ տրանսպորտային համակարգերում առկա թերացումների վերացումն է:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

# ԱՎԱՐՏՎԵՑ ՀԻՄՆԱԽՆԴՐԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ ՄԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ



***Հունվարի 17-ին Վրաստանի ֆինանսների փոխնախարար Լաշա Խուցիշվիլին, հանրագումարելով երկրի վարչապետի նախաձեռնությամբ իրականացված հիմնախնդրային վարկերի մարման նախագծի արդյունքները, հայտարարեց, որ, ելնելով իրականացված նախագծի ծավալներից, վստահությամբ կարելի է ասել, որ հիմնախնդրային վարկերի մարման նախագիծը հաջողությամբ անցկացվեց:***

Նրա խոսքով, vali.ge կայք-էջում արդեն ներկայացված 1360991 վարկային գրանցումները, որոնք առնչվում են 609 հազար ֆիզիկական անձանց, ներառնում են, ընդհանուր առմամբ, 4027099783 լարի գումար:

- Հիմնախնդրային վարկերի մեծ մասը ստանձնել է «Քարթու» հիմնադրամը: Այդ կապակցությամբ, խորին շնորհակալություն ենք հայտնում «Քարթու» հիմնադրամին եւ բոլոր ֆինանսական ինստիտուտներին, որոնք մասնակցեցին վերոնշյալ նախագծին,- հայտարարեց փոխնախարարը եւ հավելեց, որ «Քարթու» հիմնադրամի առաջարկությամբ հիմնախնդրային վարկերի կարգավորման նախագծին լրացուցիչ ներգրավվել էր ֆինանսական 14 կազմակերպություն:

- Ընթացիկ տարվա հունվարի 1-15-ը ներառյալ, ոչ բանկային 14 հաստատություններ պատրաստակամություն հայտնեցին մասնակցել նախագծին: Ֆինանսական 12 կազմակերպությունների տվյալներն արդեն ներկայացված են կայք-էջում: Պայմանավորվածություն է ձեռք բերվել նաեւ եւս երկու կազմակերպությունների վարկերի գնման հարցում, եւ այդ տվյալները մոտ օրերս կհրապարակվեն: Արդյունքում կարելի է ասել, որ բոլոր այն վարկերը, որոնց իրացման պատրաստակամություն են հայտնել բանկային եւ ոչ բանկային հաստատությունները, գնվել են ու մարվել: Վերոնշյալ նախագիծը հաջողությամբ ավարտվեց,- հայտարարեց Լաշա Խուցիշվիլին:

ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ՄԻՋԱԴԵՊ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

# ԴԻԴԻ ԴԻՂՈՄԻՈՒՄ ՊԱՅԹՅՈՒՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԶՈՀՎԵԼ Է ՉՈՐՍ ՄԱՐԴ

### ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ը ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ Է ՍԳՈ ՕՐ

***Թբիլիսիի Դիղոմի թաղամասի բնակելի շենքերից մեկում հունվարի 16-ին, գազի արտահոսքից, բնակելի շենքում տեղի ունեցած պայթյունի հետեւանքով, զոհվել է չորս մարդ, այդ թվում՝ չորսամյա մի տղա: Տուժել է յոթ հոգի, նրանցից վեցը երեխաներ են:***



Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն հունվարի 17-ը հայտարարել է սգո օր: Այդ օրը ողջ Վրաստանի տարածքում իջեցվել են պետական դրոշերը, դրոշերն իջեցվել են նաեւ արտասահմանում գործող Վրաստանի բոլոր դիվանագիտական շենքերում:

Ողբերգության օրը դեպքի վայր էին եկել Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին, վարչապետ Մամուկա Բախտաձեն, Թբիլիսիի քաղաքապետ Կախի Կալաձեն:

Նշենք, որ «Ղազտրանսգազ» ընկերության տեղեկությամբ, միայն Թբիլիսիում բնական գազի արտահոսքի արդյունքում, 2016-2018 թվականներին զոհվել է 86 մարդ: Տարածված վիճակագրության համաձայն, 2018 թվականին Թբիլիսիում վավերացվել է բնական գազով թունավորման 98 դեպք, որից 27 մահացու ելք են ունեցել: 2017 թվականին գազից թունավորվել է 62 մարդ, 30-ը՝ մահացել են: 2016 թվականին թունավորման 125 դեպքերից, մահացու ելք է վավերացվել 29 դեպքում:

Թբիլիսիի Դիդի Դիղոմիի թաղամասում տեղի ունեցած ողբերգական միջադեպի կապակցությամբ Վրաստանի նախագահին եւ վարչապետին ցավակցական հեռագրեր են հղել Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանն ու վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

ԶԳՈՒՇԱՑԵՔ «ԽՈԶԱԳՐԻՊԻՑ»

# ՆՎԱԶԵԼ Է ԳՐԻՊՈՎ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ԹԻՎԸ

*N1H1 վիրուսով (այսպես կոչված՝ «խոզագրիպ») պայմանավորված բարդացումների հետեւանքով, Վրաստանում արդեն 18 մահացության դեպք է գրանցվել:*



Այդ մասին հայտարարել է Հիվանդությունների եւ հանրային առողջության վերահսկողության ազգային կենտրոնի ղեկավար Ամիրան Գամղրելիձեն: Դրա հետ մեկտեղ, նրա խոսքով, գրիպով հիվանդների ցուցանիշը վերջին շաբաթվա ընթացքում զգալիորեն նվազել է:

- Բարձրակետը դիտվել էր դեկտեմբերի վերջին շաբաթվա ընթացքում՝ 100 հազար բնակչի հաշվով 277 դեպք: Բացի այդ, սուր շնչառական հիվանդություններով հոսպիտալացման ցուցանիշը 41 տոկոս էր: Հունվարի երկրորդ շաբաթվա ընթացքում հիվանդացության ցուցանիշը կազմել է 100 հազար բնակչի հաշվով 253 դեպք: Բացի այդ, հոսպիտալացման ցուցանիշը կրճատվել է մինչեւ 31 տոկոս,- հայտարարել է Գամղրելիձեն: Նրա խոսքով, զգալիորեն կրճատվել է երեխաների հոսպիտալացման դեպքերի թիվը՝ 46 մինչեւ 26 տոկոս: Բացի այդ, պակասել են շտապ օգնության կանչերը եւ բուժհաստատություններ հիվանդների դիմելը: Հունվարի 14-ին հաղորդվել է, որ «խոզագրիպի» վիրուսով պայմանավորված բարդացումների հետեւանքով Վրաստանում 10 ամսական երեխա է մահացել:

# ՓԵՏՐՎԱՐԻՆ ՍՊԱՍՎՈՒՄ Է ԽՈԶԱԳՐԻՊԻ ՆՈՐ ԲՌՆԿՈՒՄ



Վրաստանի փախստականների, աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարար Դավիթ Սերգեենկոյի խոսքով, փետրվարին սպասվում է խոզագրիպի նոր բռնկում՝ հաշվի առնելով, որ Եվրոպայում աճում են գրիպով հիվանդության դեպքերը:

Նրա խոսքով, նշվածը միայն վարկած է եւ հնարավոր է, որ աճ չգրանցվի:

- Գրիպի վերաբերյալ սեզոնային սրացումները տեւում են ամիս ու կես: Այն մեկնարկել է դեկտեմբերի կեսին եւ նվազում է: Փետրվարին Եվրոպայում սպասվում է գրիպի սրացում, այդ պատճառով հնարավոր է մեզ մոտ էլ այն տարածեն Եվրոպայից եկած ուղեւորները,- ասել է Սերգեենկոն:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

# ՊԱԱՏԱ ՑԱԳԱՐԵԻՇՎԻԼԻ. «ՎԵՐԻՆ ԼԱՐՍԸ ՇՐՋԱՆՑԵԼՈՒ ԱՌՆՎԱԶՆ ԵՐԵՔ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀ ԿԱ»



*Հայաստանում եւ Վրաստանում քաղաքական նոր իշխանությունների ձեւավորումից հետո, պարբերաբար խոսվում է Վերին Լարսը այլընտրանք ստեղծելու բանակցությունները վերաիմաստավորելու մասին:*

Tert.am-ի հետ զրույցում Տրանսպորտային միջանցքի հետազոտության կենտրոնի (TCRC) ղեկավար Պաատա Ցագարեիշվիլին ասաց, որ Լարսը շրջանցելու առնվազն 3 այլընտրանքային ճանապարհ կա:

- Դժվար է ասել՝ բանակցությունները կվերաիմաստավորվե՞ն, թե՞ ոչ, որովհետեւ Լարսում ամեն ինչ նորմալ է, բացի կլիմայական պայմաններից: Ճանապարհները լավն են, կարգի բերված, միայն եղանակային պայմանների պատճառով է, որ առաջանում են խնդիրներ: Հիմա կառուցվում է թունել, որը ավելի հեշտ կդարձնի փոխադրումները,- նշեց Պաատա Ցագարեիշվիլին:

Վրացի փորձագետը նշեց, որ Լարսը կարելի է շրջանցել Աբխազական երկաթգծի, Կովկաս-Փոթի երթուղու կամ Հարավային Օսեթիայով անցնող ճանապարհի շնորհիվ:

- Այս 3 երթուղիներից, իմ կարծիքով, Հայաստանի համար առավել արդյունավետ է Փոթի-Կովկաս-Երեւան ճանապարհը: Ռուսական երկաթգիծը 50 տոկոս զեղչ է տրամադրում, կան բոլոր նախադրյալները այս ուղղությունը ակտիվացնելու համար,- մանրամասնեց Պաատա Ցագարեիշվիլին:

Իսկ Աբխազական երկաթգծի բացումը, ըստ փորձագետի, կարող է լինել միայն քաղաքական կամքի դրսեւորման արդյունք:

- Աբխազական երկաթգիծը, առաջին հերթին, Աբխազիային է պետք, որովհետեւ նրանք ողբերգական տնտեսական վիճակում են: Աբխազիայով բեռների փոխադրումը օգտակար կլինի նախ Աբխազիային: Հայաստանն էլ օգուտներ կունենա այս երկաթգծի բացումից, Ռուսաստանն էլ, բայց Վրաստանի համար սա եկամտաբեր չի լինի, առանց այս երկաթգծի էլ Վրաստանը «կապրի»»,- նշեց Ցագարեիշվիլին:

Փորձագետը նկատեց, որ Աբխազական երկաթգիծը Վրաստանի համար եկամտաբեր կլինի միայն այն դեպքում, եթե բեռների փոխադրումը տարեկան կտրվածքով հասնի 8 միլիոն տոննայի, բայց «դա իրատեսական չէ»: Տարեկան փոխադրումը, նրա խոսքով, կարող է հասնել առավելագույնը 2-ից 3 տոննայի:

- Ես Աբխազական երկաթգծի բացումը չեմ գնահատում՝ որպես լիարժեք այլընտրանք Վերին Լարսը: Իսկ Փոթի-Կովկասը շատ լավ տարբերակ է բոլորի համար: Հարավային Օսիայի ճանապարհի բացումը բացառապես քաղաքական խնդիր է,- հավելեց նա:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՐՈՐԴՆԵՐԻ

# ՏԵԽԶՆՆՈՒՄ ՉԱՆՑԱԾ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻՆ ԿՏՈՒԳԱՆԵՆ... «ԽԵԼԱՑԻ» ՏԵՍԱԽՑԻԿՆԵՐԸ

*Հունվարի 14-ից Վրաստանի ճանապարհների վրա տեղակայված «խելացի» տեսախցիկները կհայտնաբերեն տեխզննում չանցած ավտոմեքենաներն ու ավտոմատ կերպով կարձանագրեն տուգանքներ:*



Ինչպես նշված է Վրաստանի ՆԳՆ կայք-էջում տեղադրված հաղորդագրության մեջ, ավտոմեքենայի սեփականատերը տուգանքի մասին տեղեկությունը կստանա SMS հաղորդագրությամբ: Հաղորդագրությունն ստանալուց 10 օրվա ընթացքում վճարման դեպքում վարորդը կստանա 20%-ոց զեղչ: Այն դեպքում, եթե սեփականատերը SMS չստանա, ապա նրան տուգանքի ծանուցումը կուղարկվի փոստով: Տուգանքների առկայությունը ավտոսեփականատերերը կարող են ստուգել նաեւ Վրաստանի ՆԳՆ կայքում:

Ընդհանուր առմամբ, Վրաստանի ճանապարհներին տեղադրված է շուրջ 1,5 հազար տեսախցիկ, որոնցից 795-ն ընդհանուր ակնարկի տեսախացիկներ են, իսկ 646-ը՝ «խելացի»: 2019 թվականին վերջիններիս թիվը կավելանա, ինչպես նաեւ կավելանա տրանսպորտի արագությունը չափող սեկցիոն ռադարների քանակը:

Ավելացնենք, որ Վրաստանում տեխզննումը ներմուծվել է փուլ առ փուլ: 2018 թվականի հունվարի 1-ից տեխզննումը դարձել է պարտադիր 3,5 տոննան գերազանցող տրանսպորտային միջոցների, ինչպես նաեւ ութ կամ ավելի ուղեւորի նստատեղ ունեցող տրանսպորտային միջոցների համար:

2018 թվականի հուլիսի 1-ից տեխզննումը պարտադիր է դարձել իրավաբանական անձանց վրա գրանցված թեթեւ մարդատար ավտոմեքենաների, ինչպես նաեւ պետության սեփականություն հանդիսացող տրանսպորտային միջոցների համար: 2018 թվականի հոկտեմբերի 1-ից տեխզննումը պարտադիր է դարձել թեթեւ մարդատար ավտոմեքենաների համար, որոնց շարժիչի ծավալը գերազանցում է 3,0-ը, իսկ 2019 թվականի հունվարի 1-ից՝ մնացած թեթեւ մարդատար ավտոմեքենաների համար:

2019 թվականի հունվարի 1-ից, բոլոր տրանսպորտային միջոցների համար ուժի մեջ է մտել ավտոմեքենաների պարտադիր պարբերական տեխնիկական զննումը: Այն, թե որ ավտոմեքենան երբ է անցնելու տեխզննում, տրանսպորտային միջոցների սեփականատերերը կարող են պարզել ըստ մեքենայի տեխնիկական անձնագրում նշված ամսաթվի: Նշենք, որ մեքենան տեխզննումը պետք է անցնի մինչեւ տեխանձնագրում նշված օրը:

# ՏԵԽԶՆՆՄԱՄԲ ՈՉ ՊԻՏԱՆԻ ՃԱՆԱՉՎԱԾ ՄԵՔԵՆԱՆԵՐԸ ԿՀԱՅՏԱՐԱՐՎԵՆ ՓՆՏՐՏՈՒՔԻ ՄԵՋ

*Ճանապարհային երթեւեկության համար ոչ պիտանի ճանաչված մեքենաները կհայտարարվեն փնտրտուքի մեջ:*



Այդ մասին հայտարարել է ավտոտեսչության կենտրոնների ասոցիացիայի ղեկավար Վաժա Ժորդանիշվիլին:

- Տեխզննման ընթացքում խոտանված ավտոմեքենաներն ավտոմատորեն տեղափոխվում են ոչ պիտանիների շարք: Նշված ժամկետում, այսինքն՝ 30 օրվա ընթացքում, նրանք կարող են ավտոմեքենաները վերանորոգել, հիմնախնդիրները կարգավորել: Նմանապես, գոյություն ունի «Ճանապարհներով երթեւեկության արգելակված» կարգավիճակ, որ նույնպես տեխզննման կենտրոնների կողմից տրվում է ավտոմեքենաներին: Ավտոտրանսպորտային նման միջոցները գրանցվում են բազային՝ որպես փնտրտուքի մեջ հայտարարված կարգավիճակով եւ դրանց նկատմամբ գործում է վարչարարության առանձին մեխանիզմը: Նման ավտոմեքենաները պարեկների համար համարվում են «փնտրուքում գտնվող». դրանց երթեւեկությունը ճանապարհներին ներկայացվում է վտանգավոր, ուստի դրանք պետք է փոխադրվեն կա'մ էվակուատորով, կա'մ ընդհանրապես չպետք է երթեւեկեն: Եթե պարեկային մեքենան հայտնաբերի նման մեքենա, ապա, ամենայն հավանականությամբ, այն կտեղափոխվի տուգանային հրապարակ,- հայտարարեց Վաժա Ժորդանիշվիլին:

Նշենք, որ ընթացիկ տարվա հունվարի 1-15-ը ներառյալ, տեխզննում է անցել 21276 ավտոմեքենա, որից 11666-ը ճանաչվել է սարքին վիճակում: Տեխզննման ընթացքում խոտանվել է 9613 ավտոտրանսպորտային միջոց, կրկնակի ստուգմամբ խոտանվել է 189 ավտոմեքենա: Միաժամանակ, ավտոտրանսպորտային 75 միջոց ճանաչվել է ճանապարհային երթեւեկության համար ոչ պիտանի:

# ՎԱՐՁԱԿԱԼՈՒՄ ԵՆ ՊԱՀԵՍՏԱՄԱՍԵՐ՝ ՏԵԽԶՆՆՈՒՄ ԱՆՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

*Ինչպես արդեն հաղորդել ենք, ընթացիկ տարվա հունվարի 1-ից բոլոր տեսակի ավտոտրանսպորտային միջոցների տեխզննումը պարտադիր է:*

Մարդատար եւ կցորդով ավտոտրանսպորտային միջոցների վարորդները տեխզննումն անցնելու համար վճարելու են 60 լարի, իսկ բեռնատար եւ ուղեւորատար ավտոմեքենաների սեփականատերերը՝ 100 լարի:

Տեխզննումն անցնելու համար մեքենաները պետք է բավարարել որոշ չափորոշիչների: Մասնավորապես, չպետք է վնասված լինի մեքենայի հողմնապակին, կարգավորված լինեն լուսավորման, արգելակման համակարգերը, բարեկարգ լինեն անվադողերը: Կարգավորված պետք է լինի ձեռքի արգելակը:

Ինչպես նշեցին ավտովարորդները, չնայած, որ նյութական տեսանկյունից իրենք կրում են որոշակի վնասներ, տեխզննումն անհրաժեշտություն է:

Առանձին փորձագետների խոսքով, որոշակի հիմնախնդիրներ են ծագել մեքենաների զննման հարցում: Մասնավորապես, նշվում է, որ վարորդների մի մասը տեխզննումն անցնելու համար սկսել է օգտվել... վարձակալած պահեստամասերից, հիմնականում՝ անվադողերից: Ինչպես նշեց «Տրանսպորտի եւ ճանապարհների ասոցիացիայի նախագահ Դավիթ Մեսխիշվիլին, պետությունը դեռեւս պատրաստ չէ կանխելու նման մեքենայությունները:

***Խորագրի նյութերը պատրաստեց ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ***